



« Բնական կերհանդակների՝
արոտավայրերի և խոտհարքների
կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի
համակարգման հարթակ»



ՀՀ ԲՆԱԿԱՆ ԿԵՐՀԱՆԴԱԿՆԵՐԻ՝ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ
ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՐԹԱԿԻ

9-ՐԴ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ

բ. Երևան, 2022թ.



« Բնական կերհանդակների
արոտավայրերի և խոտհարքների
կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի
համակարգման հարթակ»

Արձանագրություն

2022 թվականի մայիսի 13-ին Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարանի Ագրի Թեք սրահում կայացավ ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի (այսուհետ՝ Հարթակ) 9-րդ աշխատաժողովը, որը նվիրված էր արոտավայրերի բարելավմանն ուղղությամբ իրականացված ծրագրերի արդյունքների ներկայացմանը, ինչպես նաև ՀՀ Սյունիքի մարզի Գորիս, Տեղ և Տաթև համայնքներից՝ դեպի Գորայք համայնքի արոտավայրեր անասնազվիսաքանակի արոտահանման նախաքաշի երթուղու տեղորոշում և այն սպասարկող ենթակառուցվածքների կառուցման նախագծի և արոտավայրերի կայուն կառավարման նպատակով օրենսդրական նախաձեռնությունների ներկայացում:

Հասցե՝ Հայաստան, 0070, Երևան, Այգեստան թաղամաս, 5-րդ փողոց, 3/1 տուն

Հեռ՝ +374(10) 51-75-28

Էլ. հասցե՝ info@arot.am



Աշխատաժողովի օրակարգը՝

Ժամ	Թեմա
10:00-10:15	Մասնակիցների գրանցում
10:15-10:45	Միջոցառման օրակարգի և մասնակիցների ներկայացում <i>Ներկայացնող՝ Հարթակի քարտուղարություն</i> Ողջույնի խոսք, Արուսյակ Ալավերդյան, Համաշխարհային Բանկ
10:45-11:15	Արոտավայրերի բարելավման ուղղությամբ իրականացված ծրագրերի արդյունքների ներկայացում <ul style="list-style-type: none">ՀԳՌԿՄ 2 ծրագրի արդյունքների ներկայացում <i>Ներկայացնող՝ Կ.Թորոսյան, ՀԳՌԿՄ -2 ծրագրի 1-ին քաղաղրիչի համակարգող</i>Հարց ու պատասխան
11:15-11:45	<ul style="list-style-type: none">Անասնապահության զարգացման ծրագրերի արդյունքների և նոր ծրագրի մեկնարկի ներկայացում <i>Ներկայացնող՝ Վ.Հովհաննիսյան, ՌԶԳ ՀԿ</i>Հարց ու պատասխան
11:45-12:15	<ul style="list-style-type: none">ՀՀ Սյունիքի մարզի Գորիս, Տեղ և Տաթև համայնքներից՝ դեպի Գորայք համայնքի արոտավայրեր անասնազվիաքանակի արոտահանման նախարաքաշի երթուղու տեղորոշում և այն սպասարկող ենթակառուցվածքների կառուցման նախագծի ներկայացում <i>Ներկայացնող՝ Գ. Թովմասյան, Արոտների կառավարման փորձագետ</i>Հարց ու պատասխան
12:15-12:30	Սուրճի ընդմիջում
12:30-13:00	Արոտավայրերի կայուն կառավարման նպատակով օրենսդրական նախաձեռնությունների ներկայացում <i>Ներկայացնող՝ Վ. Պետրոսյան ԳՄՀԸ Իրավական փորձագետ</i>
13:10	Միջոցառման ամփոփում, հետագա քայլերի ներկայացում

Հանդիպմանը մասնակցեցին՝

Հասցե՝ Հայաստան, 0070, Երևան, Այգեստան թաղամաս, 5-րդ փողոց, 3/1 տուն

Հեռ՝ +374(10) 51-75-28

Էլ. հասցե՝ info@arot.am



Հարություն Դավեյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
Դավիթ Մեջլումյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Գյուղատնտեսության ծրագրերի իրականացման վարչության ՀԳՌԿՄ-2 ծրագիր/ (CARMAC-2)
Կարեն Թորոսյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Գյուղատնտեսության ծրագրերի իրականացման վարչության ՀԳՌԿՄ-2 ծրագիր/ (CARMAC-2)
Եղիազար Դավթյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
Արփինե Փանոսյան	ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն
Արուսյակ Ալավերդյան	Համաշխարհային Բանկ, Երևանյան գրասենյակ /(WB)
Պիեր Գերբեր	Համաշխարհային բանկ/ (WB)
Լևոն Սովսիսյան	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ), GIZ, ECOserve ծրագիր
Ադասի Մնացյան	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ), GIZ, ECOserve ծրագիր
Վահագն Պետրոսյան	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ)/ (GIZ)
Գագիկ Թովմասյան	Արոտների կառավարման փորձագետ
Լիլիթ Պետրոսյան	«Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ (ՌԶԳ)/(SDA) Հարթակի քարտուղարության համակարգող
Վահե Հովհաննիսյան	«Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ (ՌԶԳ)/(SDA)
Մարինե Սարգսյան	Միավորված Ազգերի Զարգացման Ծրագիր (ՄԱԶԾ)
Արման Օհանյան	Անասնաբույժների Ազգային Ասոցիացիա ՀԿ
Հերմինե Պողոսյան	ՀՀ ԱԺ Տարածքային կառավարման, ՏԻ, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողով
Հրաչյա Զաքոյան	Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարան
Արմեն Շահբազյան	Բնության Համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ / WWF Armenia
Արմեն Ավետիսյան	Սյունիքի մարզպետարան
Սուրեն Շիրինյան	Սյունիքի մարզ, Տեղ համայնք
Լիանա Մանուչարյան	Սյունիքի մարզ, Տաթև համայնք



Աշխատաժողովին մասնակցեցին ՀՀ Էկոնոմիկայի, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունների, ՀՀ ԱԺ Տարածքային կառավարման, ՏԻ, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի, ոլորտում գործող պետական, միջազգային, հասարակական և գիտական հաստատությունների ներկայացուցիչներ:

Հարթակի գործունեությանը զգալի աջակցություն է ցուցաբերել ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը: Բնական կերհանդակների արդյունավետ կառավարումը, պահպանումը, ճիշտ շահագործումը անմիջականորեն կապված են ՏԻՄ-երի հետ, վերջիններիս աշխատանքի հետ, և այդ առումով նախարարությունը նպաստում է այս ոլորտում ստեղծել բարենպաստ միջավայր և կարևորում է Հարթակի գործունեությունը:

Հանդիպման օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը՝

1. Արոտների բարելավման ուղղությամբ իրականացված ծրագրերի արդյունքների ներկայացում,
2. ՀՀ Սյունիքի մարզի Գորիս, Տեղ և Տաթև համայնքներից՝ դեպի Գորայք համայնքի արոտավայրեր անասնազվաքանակի արոտահանման նախարարաշի երթուղու տեղորոշում և այն սպասարկող ենթակառուցվածքների կառուցման նախագծի ներկայացում,
3. Արոտավայրերի կայուն կառավարման նպատակով օրենսդրական նախաձեռնությունների ներկայացում

Ողջույնի խոսքով հանդես եկավ և աշխատաժողովի մասնակիցներին բեղմնավոր աշխատանք մաղթեց Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարանի ուսումնական գծով պրոռեկտոր Հրաչյա Զաքոյանը՝ շատ կարևորելով Հարթակի գործունեությունն ու արոտավայրերի բարելավման ուղղությամբ իրականացվող միջոցառումները: Մասնակիցներին ողջունեց նաև Համաշխարհային Բանկի գյուղատնտեսության ավագ մասնագետ Արուսյակ Ալավերդյանը, ով իր խոսքում շատ կարևորեց ՀԲ մասնակցությունը Հարթակի աշխատաժողովին, քանի որ այն հնարավորություններ է ստեղծում լուծումներ տալու բնական կերհանդակների կառավարման ոլորտում առաջացած խնդիրներին:



Աշխատաժողովի ընթացքում ներկայացվեցին արոտավայրերի բարելավման ուղղությամբ իրականացված ծրագրերի, մասնավորապես ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից իրակացվող ՀԳՌԿՄ-2 ծրագրի արդյունքներն ու ձեռքբերումները, ինչպես նաև ՌԶԳ ՀԿ կողմից Հայաստանի հյուսիսում և հարավում իրականացված անասնապահության զարգացման ծրագրերի արդյունքներն ու ձեռքբերումները, ինչպես նաև ներկայացվեց ՌԶԳ-ի կողմից մեկնարկված նոր՝ «Անասնապահության զարգացում Հայաստանում՝ հարավ-հյուսիս 2» ծրագիրը:

Զեկույցով հանդես եկավ նաև արոտավայրերի կառավարման մասնագետ Գագիկ Թովմասյանը՝ ներկայացնելով «ՀՀ Սյունիքի մարզի Գորիս, Տեղ և Տաթև համայնքներից՝ դեպի Գորայք համայնքի արոտավայրեր անասնազվաքանակի արոտահանման նախաքաշի երթուղու տեղորոշում և այն սպասարկող ենթակառուցվածքների կառուցման» նախագիծը: Աշխատաժողովի մասնակիցները բարձր գնահատեցին այս ընթացքում արոտավայրերի բարելավման ուղղությամբ իրականացված ծրագրերի դրական արդյունքները, ինչպես նաև կարևորեցին նախաքաշի նախագիծը կյանքի կոչելուն միտված քայլերն ու շահագրգիռ կազմակերպությունների դերը:

Միջոցառման երկրորդ մասում Գերմանիայի Միջազգային Համագործակցության Ընկերության (ԳՄՀԸ) իրավական խորհրդատուն ներկայացրեց ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության նախաձեռնությամբ և ԳՄՀԸ ԷԿՈՍերվ ծրագրի միջոցով իրականացված արոտավայրերի կայուն կառավարմանը միտված օրենսդրական բարեփոխումների նախագծերը: Օրենսդրական նախագծերի ընդունումը բարենպաստ միջավայր կստեղծի ՏԻՄ-երի կողմից արոտավայրերի արդյունավետ կառավարման ապահովման ինստիտուցիոնալ մակարդակում:

Առաջարկություններ, հանձնարարականներ, եզրակացություններ



- Արձանագրվեց, որ այս հետպատերազմյան ժամանակաշրջանում արոտների պահպանության և կայուն կառավարման դերը գյուղատնտեսության և համայնքների զարգացման գործում ավելի կարևոր է, քան երբևիցե, և Հարթակում ներգրավված կառույցները պետք է շարունակեն աշխատել նախկինում որդեգրված ուղղություններով շատ ավելի համառ, ջանասիրաբար և նվիրումով:
- Արձանագրվեց որ, ՀԳՌԿՄ-2 ծրագիրը երկարաձգվելու է ևս 6 ամսով՝ մինչև Հոկտեմբերի 31-ը:
- Նախաքարշի նախագծի ներկայացումից հետո ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության ներկայացուցիչ՝ Արփինե Փանոյանը հետաքրքրվեց արդյոք նախագիծը ՇՄԱԿ հետազոտությունն անցել է, թե ոչ, որին ի պատասխան նախագիծը ներկայացնող պ-ն. Թովմասյանը պատասխանեց, որ նախատեսվել է իրականացնել ՇՄԱԿ փորձաքննությունը:
- Արձանագրվեց, որ նախաքարշի նախագիծը ավելի առարկայական ներկայացնելու համար անհրաժեշտ է կազմակերպել արտագնա հանդիպում Սյունիքի մարզում, որտեղ ներկա կլինեն և մարզպետարանի համապատասխան ստորաբաժանման աշխատակիցները, և ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության ներկայացուցիչները հետաքրքրող հարցերը քննարկելու համար:

Հետագա քայլեր

Հետագա քայլեր

- Կազմակերպել արտագնա հանդիպում Սյունիքում՝ նախաքարշի նախագիծը առավել մանրամասն և առարկայական քննարկելու և հասկանալու համար:

Համակարգման հարթակի 9-րդ աշխատաժողովի վերաբերյալ անդրադարձ է հրապարակվել ՀՀ Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական էջում՝ <https://mineconomy.am/news/2571>, ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի կայք էջում՝ <https://arot.am/5271/.html>, Ռազմավարական Զարգացման Գործակալություն ՀԿ-ի կայքում՝ <https://bit.ly/3G3IBBu>, ինչպես նաև Հարթակի, ՌԶԳ



« Ինտեգրացիոն կենտրոնի ղեկավարության և խորհրդակցության կայանի կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակ »

ՀԿ-ի, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության սոցիալական էջերում՝

<https://www.facebook.com/sda.armenia>

<https://www.facebook.com/Coordination-Platform-for-Sustainable-Management-of-RA-Natural-Fodder-Areas-100170971837976>)



Հասցե՝ Հայաստան, 0070, Երևան, Ալգեստան թաղամաս, 5-րդ փողոց, 3/1 տուն

Հեռ՝ +374(10) 51-75-28

Էլ. հասցե՝ info@arot.am